

3204

ЗКН

4-68

1919

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

У КОММУНИСТИЧЕСКАЯ ПАРТИЯ АРМЕНИИ
№ 2 № 2

Պրոլետարները թույր երկրներին միացե՛ք!

ԿՕՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

ԻՆՏԵՐՆԱՑԻՕՆԱԼԻ


ՊԼԱՏՖՕՐՄԸ

ԳԻՆԸ 1 Ր.



Платформа Коммунистического Интернационала

5 2001



ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ

ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԹՈՍԿԻՆ 1919.

2010

3KH
4-68

10853



40

Տպարան՝ Կենտրոն Հայկական Կոմիսարիատի, Մոսկվա, Արմեանսկի փ.,
Типография Центрального Армянского Комиссариата. Москва, Армянск.

ԿՕՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՕՆԱԼԻ ՊԼԱՏՖՈՐՄԸ

Կապիտալիստական համաշխարհային սիստեմի հակա-սուլժիւնները, որոնք թաղուած էին նրա երակներում, հսկա-չական ուժով երևան եկան վիթխարի պայթիւնի—իմպերիա-լիստական համաշխարհային մեծագոյն պատերազմի մէջ:

Կապիտալիզմը, արտադրութեան կազմակերպումով, տրք-նում էր հեռու վանել իր սեփական անարխիան: Բազմաթիւ ժրջող ձեռնարկունների տեղ կազմակերպին կապիտալիստների զօ-րեղագոյն միութիւններ (սինդիկատներ, արտէլներ, տրէստ-ներ), բանկային կապիտալը միացաւ արտադրութեան կապի-տալի հետ: ամբողջ անախանկան կեանքն ընկաւ Ֆինանսա-կապիտալիստական օլիգարխիայի իշխանութեան տակ, որը այդ իշխանութեան հիմքներն էր: Վրա իր կազմակերպման ուղիով հասաւ բացառիկ արտադրութեան: Ազատ կօնիու-րէնցիայի տեղը բռնեց մօնօպօլիան: Անշատ կապիտալիստը զարձաւ կապիտալիստական միութեան կապիտալիստ-անդա-մը: Խեղացնող անարխիան փոխարինեց կազմակերպումով:

Սակայն հէնց այն չափով, որով արտադրութեան կապի-տալիստական եղանակի անարխիան առանձին երկրներում փոխարինեց կապիտալիստական կազմակերպումով, աւելի ու աւելի էս սրւեցին հակասութիւնները, ժրջակցութեան կախ-ները, համաշխարհային անախանկան անարխիան:

Մեծագոյն, կազմակերպւած պաշտակային պետութիւն-ների միջև եղած կռիւր երկաթէ անհրաժեշտութեամբ բերեց

հասցրեց հրէշային, իմպերիալիստական համաշխարհային պատերազմին: Շահի ծարաւը մղեց համաշխարհային կապիտալին դէպի կռիւ՝ սոցաւման նոր շուկաներ, կապիտալի գործադրութեան նոր շրջաններ, հում նիւթերի նոր աղբիւրներ, զաղութային ստրուկների էժանազին բանւորական ուժ ձեռք բերելու համար:

Իմպերիալիստական պետութիւնները, որոնք բաժանել էին իրար մէջ ամբողջ աշխարհը, որոնք բաղամիջիտն աֆրիկական, ասիական, աւստրալիական, ամերիկական պրօլետարներին և զիւղացիներին դարձրել էին բանւորական անասուններ, պէտք է որ վաղ թէ ուշ վիթխարի ընդհարումները մէջ մերկացնէին կապիտալի իսկական անարխիական բնոյթը: Այսպէս առաջ եկաւ մեծագոյն ռերազործութիւնը՝ աւաղակային համաշխարհային պատերազմը:

Կապիտալիզմը տքնում էր հեռու վանել իր հսկասական սօցիալական ստրուկտուրան: Բուրժուական հասարակութիւնը՝ դասակարգային հասարակութիւն է: Սակայն մեծ, «քաղաքակիրթ» պետութիւնների կապիտալը կամենում էր միացունել սօցիալական հակասութիւնները: Կողոպտւած գաղութային ժողովրդների հաշւին կապիտալը կաշառել էր իր վարձու ստրուկներին, շահագործողների և շահագործւողների միջև շահերի ընդհանրութիւն էր ստեղծել, շահերի, որ ուղղւած էին ճնշւած կօթնիւծների-գաղութային ժողովրդների դեղին, սև, կարմրամորթների դէմ: Նա շղթայել էր երօպական և ամերիկական բանւոր դասակարգը իմպերիալիստական «հայրենիքին»:

Սակայն մշտական կաշառումի հէնց այդ միւկնոյն եղանակը, որով ստեղծւել էր բանւոր դասակարգի պատրիօտիզմը և նրա հոգեւոր ստրկացումը, պատերազմի շնորհիւ իր սեփական հակառակ կողմը դարձաւ: Պրօլետարիատի ֆիզիքական բնաշնչումն, լիակատար ստրկացումն, հրէշային ճնշումն, աղքատանալն և ալլասեռումն, համաշխարհային սով — ահա այդ

եղաւ վերջին վարձատրութիւնը քաղաքացիական հաշտութեան համար: Նա օղբ ցնդեցրեց: Իմպերիալիստական պատերազմը վերածւել քաղաքացիական կռիւ:

Ծնւեց նոր զարաշրջան: Կապիտալիզմի քայքայման, նրաներին անկման էպօխան: Պրօլետարիատի կօմունիստական լեգալիտութեան դարաշրջանը:

Իմպերիալիստական սխառէմը քաղաքանդ է լինում: Յուզումներ գաղութներում, յուզումներ մանր ժողովրդներին մէջ՝ մինչ այս անկախութիւնից զուրկ, պրօլետարիատի ապստամբութիւններ, յաղթական պրօլետարական լեգալիտութիւններ մի քանի երկրներում, իմպերիալիստական զօրաբանակների քայքայումն, տիրապետող դասակարգերի լիակատար անընդունակութիւն՝ առաջիկայում ևս վարելու ժողովրդների բաղդը, — ահա այսպէս է ներկա կացութեան պատկերը ամբողջ աշխարհում:

Մարգիւթեանը, որի ամբողջ կուլտուրան կործանման ենթարկւեց, լիակատար ոչնչացման վտանդ է սպառնում: Միայն մի ուժ կա, որ ընդունակ է նրան փրկելու, և այդ ուժը — պրօլետարիատն է: Հին կապիտալիստական «կարգը» արդէն չկա, նա ալլես չի կարող գոյութիւն ունենալ: Արտադրութեան կապիտալիստական եղանակի գոյութեան վերջնական հետեանքը հանդիսանում է քաղաքացիական պատերազմը է վերջ ալ միայն ամենամեծ արտադրական դասակարգ — բանւոր դասակարգը: Նա պէտք է հաստատի իսկական կարգ, կօմունիստական կարգը: Նա պէտք է խորտակի կապիտալի տիրապետութիւնը, անհնար դարձնի պատերազմները, ջնջի պետութիւնների միջև սահմանները, վերածի ամբողջ աշխարհը ինքն իր համար աշխատող մի համարնկերացութեան, իրադօրծի ժողովրդների ազատութիւնն ու եղբայրութիւնը:

Մինչ այդ, համաշխարհային կապիտալը պատրաստւում է վերջին կռիւ: «Ազգերի լիգայի» և պաշտօնիստական ցնդա-

բանութիւններ ծածկողի տակ նա վերջին ճիգերն է անում իրար կպցնելու տարերային կերպով քանգեղ կապիտալիստական սխտեմի մասերը և իր ուժերը ուղղելու անյաղթելիօրէն բարբոքող պրօլետարական յեղափոխութեան դէմ:

Կապիտալիստական դասակարգերի այդ նոր, հսկայական դաւադրութեանը պրօլետարիատը պէտք է պատասխանի քաղաքական իշխանութիւնը զրաւելով, ուղղի այդ իշխանութիւնը իր սեփական թշնամիների դէմ և օգտագործի որպէս ազդակ՝ հասարակութեան անտեսական վերակազմութեան համար: Համաշխարհային պրօլետարիատի վերջնական յաղթանակը կնշանակի՝ աղատադրւած մարդկութեան իսկական պատմութեան սկիզբը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԳՐԱՒՈՒՄԸ:

Քաղաքական իշխանութեան զրաւումը պրօլետարիատի կողմից նշանակում է բուրժուազիայի քաղաքական իշխանութեան ոչնչացումը: Ամենաուժեղ դէնքը բուրժուազիայի ձեռքում հանդիսանում է բուրժուական պետական ապարատը, իր կապիտալիստական բանակով, որ զանաւում է բուրժուական-իւնկերական օթիցէրութեան հրամանատարութեան տակ, նրա ռատիկանութիւնն ու ժանդարմերիան, նրա բանտապահներն ու դատաւորները, նրա տէրտէրները, չինովնիկները և այլն: Պետական իշխանութեան զրաւումը չի կարող առաջ բերել միայն մինիստրութիւնների մէջ անձնական կազմի փոփոխութիւններ, այլ այդ նշանակում է անհանդուրժելի պետական ապարատի ոչնչացումն, իրական ուժի կենտրոնացումն իր ձեռքում: Բուրժուազիայի, հակաշեղափոխական օթիցէրութեան, սպիտակ զւարդիայի զինաթափումն և պրօլետարիատի, յեղափոխական զինւորների և կարմիր բանւորական զւարդիայի զինումն, բոլոր բուրժուական դատաւորների ջրումն և պրօլետարական գատարանի կազմակերպումն, յետադիմական պաշտօնէութեան տիրապետութեան ոչնչացումն և կառավարչա-

կան նոր պրօլետարական օրգանների ստեղծումն: Պրօլետարիատի յաղթանակը ապահովում է թշնամունը կազմալուծելով և պրօլետարական իշխանութիւնը կազմակերպելով: այն պէտք է նշանակի՝ բուրժուականը խորտակել և պրօլետարական պետական ապարատը կառուցել: Այնուհետև միայն, երբ պրօլետարիատը կը յաղթի, վերջնականապէս ընկճելով բուրժուազիայի դիմադրութիւնը, այն ժամանակ միայն նա կը կարողանա օգտակար կերպով ստիպել իր նախկին հակառակորդներին ծառայելու իրեն, առաքանաբար հրապուրելով նրանց իր կոնտրօլի տակ դէպի կոմունիստական շինարարութեան աշխտանքը:

ԴԷՄՕԿՐԱՏԻԱՆ ԵՒ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ:

Ինչպէս որ ամեն պետութիւն, պրօլետարական պետութիւնն էլ ներկայացնում է իրենից հարկադրութեան ապարատ, բայց այդ ապարատը ուղղում է այժմ բանւոր դասակարգի թշնամիների դէմ: Նրա դերը կայանում է նրանում, որ ընկճի և անհնար դարձնի շահագործողների հակամարտութիւնը, որոնք անյոյս կուլի մէջ գործադրում են ամեն մի միջոց, խեղդելու յեղափոխութիւնը արեան հեղեղներում: Միւս կողմից պրօլետարիատի գիկտատութան, որը պաշտօնապէս հասարակութեան մէջ այդ դասակարգին տիրապետողն է դարձրել, ներկայացնում է իրենից մի անցողական դրութիւն:

Այն չափով, ինչ չափով կրնկճի բուրժուազիայի դիմադրութիւնը, սեփականազրկման կենթարկւի նա և առաքանաբար կը դառնա հասարակութեան աշխատող խաւ, կանհետանա նաև դիկտատութեան, կմեռնի պետութիւնն ու հասարակութեան դասակարգերի բաժանումը:

Այսպէս կոչւած դէմօկրատիան, այսինքն բուրժուական գէմօկրատիան, ոչ այլ ինչ է, եթէ ոչ բուրժուական դիկտատութեան քողարկումը: Հռչակաւոր ընդհանուր «Ժողովրդա-

կան կամքը» հանգիստանում է ճիշտ այնպիսի մի կեղծիք՝
ինչպիսին նաև միաձուլ ժողովուրդը: Գործնականում գոյու-
թիւն ունին դասակարգեր, հակադիր, իրար հակասող ձրգ-
տույթներով: Եւ որովհետեւ բուրժուական ներկայացնում է
իրենից աննշան փոքրամասնութիւն, ապա ուրեմն նա օգտուում
այդ Ֆրիցիայից, այդ պատիր «ժողովրդական կամքից», որ-
պէտքի այդ գեղեցիկ խօսքի ծածկոցի տակ հաստատի իր տի-
րապետութիւնը բանւոր դասակարգի վրա և նրա վրին փա-
թաթի իր դասակարգի կամքը: Ընդհակառակը, աղղարնակ-
չութեան հսկայական մեծամասնութիւնը կազմող պրօլետա-
րիատը, բոլորովին արձակ օգտագործում է իր մասսայական
կազմակերպութիւնների, իր Խորհուրդների, դասակարգային
գորութիւնը, որ գերջ առ բուրժուադիայի արտօնութիւննե-
րին և ապահովի ղէպի ապագադասակարգային կոմունիստական
հասարակութեան փոխանցումը:

Բուրժուական ղեմօկրատիայի էութիւնը կայանում է
իրաւունքի և ազատութեան զուտ գէկարատիվ, ձեական
ճանաչելուն մէջ, որոնք արդէն իսկ անմատչելի են պրօլե-
տարիատին և կիսապրօլետարական էլէմէնտներին, շնորհիւ
նիւթական միջոցներ չլինելուն, մինչդեռ բուրժուադիան լիա-
կատար հնարաւորութիւն ունէր օգտագործելու իր նիւթա-
կան միջոցները, իր մամուլը և ստութիւնները ու ժողովրդին
խտրելու համար իր կազմակերպութիւնները: Ընդհակառակը,
Խորհրդային սիստէմի, պետական իշխանութեան այն նոր
տիպի էութիւնը կայանում է այն բանում, որ նրա օրով
պրօլետարիատը հնարաւորութիւն է ստանում իրականօրէն
ապահովելու իր համար իր իրաւունքներն ու ազատութիւնը:
Խորհրդային իշխանութիւնը ժողովրդին է յանձնում ամե-
նապէս պալատները, տները, տպարանները, ամբարան թուղ-
թը և այլն, նրա մամուլի, նրա ժողովների, ակումբների հա-
մար: Միայն այն ժամանակ էլ պրօլետարական ղեմօկրատիան
իրապէս հնարաւոր է գառնում:

Բուրժուական ղեմօկրատիան իր պարլամենտական սիս-
տէմի հետ խօսքով միայն թալ է տալիս մասսաներին մասնակ-
ցելու պետութիւնը կառավարելուն մէջ: Սակայն գործնական
կեանքում մասսաները և նրանց կազմակերպութիւնները մի-
անդամայն հեռու են քշուում իրական իշխանութիւնից և եր-
կիրը իսկապէս կառավարելուց: Խորհրդների սիստէմով կա-
ռավարում են մասսայական կազմակերպութիւնները, իսկ
նրանց միջոցով իրենք մասսաները, որչափով Խորհուրդները
էլ աւելի աճող քանակով բանւորներ են դրաւում պետու-
թիւնը կառավարելու և միայն այս ուղիով ամբողջ բանւոր
ժողովուրդը աստիճանաբար ներս է քաշուում պետութիւնը կա-
ռավարելու իսկական աշխատանքի մէջ: Խորհրդային սիստէմն,
այդպիսով, չենւում է պրօլետարիատի մասսայական կազմա-
կերպութիւնների վրայ, յանձին հէնց այդ Խորհուրդների, չե-
ղափոխական արհեստակցական միութիւնների, կօօպերատիվ-
ների և այլն:

Բուրժուական ղեմօկրատիան և պարլամենտարիզմը, շնոր-
հիւ օրէնսդիր և գործադիր իշխանութիւնների բաժանման
և պատգամաւորներին չեա կանչելու իրաւունքի բացակայու-
թեան, սրում են մասսաների մեկուսացումը պետութիւնից:
Ընդհակառակը, Խորհրդային սիստէմը իր՝ չեա կանչելու իրա-
ւունքով, օրէնսդիր և գործադիր իշխանութիւնների միացու-
մով և աշխատող կօլէգիաներ լինելու Խորհուրդների բնորո-
նակութեան հետևանքով, մասսաները կապում է վարչական
մարմինների հետ: Այդ կապը հեշտանում է նոյնպէս շնորհիւ
այն բանի, որ Խորհուրդների սիստէմով քնարութիւնները
տեղի են ունենում ոչ թէ արւեստականօրէն սաղեղամ տե-
րիտօրիալ շրջանների համաձայն, այլ համապատասխանում են
արտադրական միացումներին:

Այդպիսով Խորհրդային սիստէմը ապահովում է իրական
պրօլետարական ղեմօկրատիայի հնարաւորութիւնը, ղեմօկրա-
տիայի՝ պրօլետարիատի համար և պրօլետարիատի ներսում, և

դէմօկրատիայի, որ ուղղուած է բուրժուազիայի դէմ: Այդ սի-
տէմով արդիւնազորական պրօլէտարիատի համար ապահով-
ւում է որպէս զեկամարի, աւելի լաւ կաղնակերպւած և քա-
ղաքականապէս աւելի հասուն դասակարգի գերակշիռ կացու-
թիւնը, դասակարգի, որի հէգէմօնիայի տակ ի վիճակի են
բարձրանալու աստիճանաբար կիսապրօլէտարական էլէմէնտ-
ները և զիւրի գեղջիկական չքաւոր զանգւածը: Արդիւնազոր-
ական պրօլէտարիատի այդ ժամանակաւոր գերակշռութիւն-
ները պիտի դործադրեն այն բանի համար, որ զիւրի չու-
նեւոր մանր-բուրժուական մասսաները դուրս կորզեն զիւրա-
կան վաշխառու-աղբուկների և բուրժուազիայի աղբեցութեան
տակից, կաղնակերպին և ներս առնեն նրանք որպէս աշ-
խատակիցներ կօմունիստական շինարարական գործում:

ԲՈՒՐՃԻԱԶԻԱՅԻ ՍԵՓԱԿԱՆԱԶՐԿՈՒՄԸ ԵՒ ԱՐՏԱԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՅՆԱՑՈՒՄԸ.

Կապիտալիստական սիստէմի և կապիտալիստական աշ-
խատանքային գիացիպլինայի քայքայումը ներկա միջոցա-
կարգային չարաքերութիւնների պայմաններում անհնար
է դարձնում արտադրութեան վերականգնումը նախկին
հիմունքների վրայ: Աշխատավարձի աւելացման համար բան-
ւորների մղած կռիւը, նոյն իսկ նրա յաջողութեան դէպ-
քում, չի հասցնում կեանքի մակերևութի սպասելի բար-
ձրացմանը, օրովհետեւ սպառման ապրանքների գների աճումը
անփոփոխ հաւասարեցնում է դէքի իւրաքանչիւր յաջողու-
թիւնը: Աշխատավարձի աւելացման համար բանւորների եռ-
անգուն կռիւը այն երկրներում, որոնց կացութիւնը որոշակի
անցուսալի է, շնորհիւ իր տարերային կատարելութեանը և
ընդհանուր բնոյթ բնագոնելու տէնդէնցիային, անհնար է
դարձնում կապիտալիստական արտադրութեան չետադա ա-
ռաջխաղացումը: Բանւորների կացութեան բարելաւմանը կա-

րելի է հասնել միայն այն ժամանակ, երբ պրօլէտարիատն
ինքր կզառնա արտադրութեան տէրը: Որպէսզի կարելի լինի
բարձրացնել տնտեսութեան արտադրական ուժերը, որպէսզի
որքան կարելի է շուտ ընկնել բուրժուազիայի դիմադրութիւ-
նը, որը ձգձգում է հին հասարակութեան մահաւան զաւա-
րումները և հէնց դրանով տնտեսական կեանքի լիակատար
քայքայման վտանգ է ստեղծում, պրօլէտարական դիկտատու-
րան պէտք է իրադործի խոշոր բուրժուազիայի և ազնւակա-
նութեան սեփականադրկումը և սրտադրութեան ու փոխա-
դրութեան միջոցները դարձնի պրօլէտարական պետութեան
հասարակութեան սեփականութիւն:

Կօմունիզմը ծնւում է այժմ կապիտալիստական կարգերի
աւերակներից, պատմութիւնը ուրիշ էլք չի տա մարդկու-
թեանը: Օպօրտիւնիստները, որոնք տնտեսութեան կապիտա-
լիստական սիստէմի վերականգնման ցնորական պահանջներն
են մէջ տեղ դնում, որպէսզի չետ մղեն սօցիալիզացիան,
ձգձգում են միայն ճշմարտի լուծումը և ամբողջական կոր-
ծանման ուղղակի սպառնալիքը ստեղծում, այն ժամանակ, երբ
կօմունիստական չեղափոխութիւնը հանդիսանում է ամենալաւ
և էապէս հնարաւոր միջոցը, որի շնորհիւ հասարակութեան
իսկական արտադրական ուժ՝ պրօլէտարիատը, իսկ նրա հետ
էլ ինքը հասարակութիւնը կարող են իրենց փրկել:

Պրօլէտարական դիկտատուրան բոլորովին իր գործը չի
համարում արտադրութեան և փոխադրութեան միջոցները
որեկից կերպ փաշ անել—բաժանել: Ընդհակառակը նրա
նպատակն է հանդիսանում արտադրական ուժերի էլ աւելի
կետրոնացումը և ամբողջ արտադրութեան ենթարկումը
միտտեսակ կարգաւորման (պլանի):

Որպէս առաջին քայլ, ամբողջ տնտեսութեան սօցիալի-
զացիայի ընթացքում, անհրաժեշտ են խոշոր բանկերի ապա-
րաւի համալնացումը, որոնք այժմ զեկամարում են արդիւ-
նադործութիւնը. բոլոր տնտեսական պետական-կապիտալիս-

տական օրգաններին տիրապետելը՝ զրանց պրօլետարական պետական իշխանութեանը յանձնելու եղանակով, բոլոր համայնական ձեռնարկութիւններին տիրապետելը, արաւորութեան սինդիկատների և արէստների բնօրէն կրող ճիւղերի համայնացումը, և՛ նմանապէս այն ճիւղերի, որոնցում կապիտալի կօնցէնտրացիայի և կէնտրօնացման աստիճանը տէխնիքապէս հնարաւոր են դարձնում համայնացումը, զիւղատնտեսական կալաժքների սօցիալիզացիան և նրանց վերածումը հաւաքականօրէն կառավարող հողագործական տնտեսութիւններին:

Ինչ վերաբերում է աւելի մանր ձեռնարկներին, ապա պրօլետարիատը, նախելով նրանց մեծութեանը, աստիճանաբար նրանց պէտք է միացնի:

Սրա հետ միասին պէտք է առանձնապէս բնդգծել, որ մանր սեփականութիւնը բնաւ էքսպրօպրացիայի չի պիտի ենթարկւի, և մանր սեփականատէրերը, որոնք չեն շահագործում ուրիշի աշխատանքը, չպէտք է որևէ բռնութիւնների ենթարկւին: Այդ խաւը ներս կառնւի սօցիալիստական կազմակերպութեան սֆէրայի մէջ աստիճանաբար այն օրինակով ու պրակտիկով, որ ցօյց կտա նոր կարգերի առաւելութիւնը, որը կազատագրի մանր գիւղացիութիւնը և քաղաքների մանր բուրժուազիային վաշխառուների և ազնւականութեան տնտեսական ճնշումից, հարկերի ծանրութիւնից (յատկապէս պետական պատերերի ոչնչացման հետեանքով) և այլն:

Պրօլետարական զիկտատուրայի առաջ դրւած խնդիրը տնտեսական շրջանում կարող է իրագործւել միայն այն չափով, ինչ չափով պրօլետարիատը հնար կունենա արտադրութիւնը վարելու համար կենտրոնական օրգաններ ստեղծել և բանւորական վարչութիւնը իրականացնել: Ուստի նա հարկադրւելու է օգտագործել իր մասսայական կազմակերպութիւններից նրանք, որոնք բոլորից աւելի սերտօրէն կապւած են արտադրութեան պրօցէսի հետ:

Բաշխման շրջանում պրօլետարական զիկտատուրան պէտք է իրագործի առևտրի փոխարինումը մթերքների ու զիղ բաշխումով, այդ նպատակի համար տնհրաժեշտ միջոցներից պէտք է չիղել՝ խոշոր առևտրական ձեռնարկութիւնների սօցիալիզացիան, բաշխման բոլոր բուրժուական-պետական, և նմանապէս մօշտիցի պալ օրգաններին յանձնումը պրօլետարիատի ձեռքը, կօնտրօլը՝ խոշոր կօպէրատիվ միութիւնների վրա, որոնց կազմակերպչական ապարատը ղեռ ևս խոշոր տնտեսական նշանակութիւն կունենա փոխանցման շրջանում, այս բոլոր օրգանների աստիճանական կէնտրօնացումը և նրանց վերածումը ամբողջական միութեան՝ մթերքների նպատակաշարմար (բացիօնալ) բաշխման համար:

Ինչպէս որ արտադրութեան, այնպէս էլ բաշխման շրջանում պէտք է օգտագործւել բոլոր իրենց ճիւղերի մէջ մասնագիտացած տէխնիկներին և սպէցիալիստներին, այն բանից յետոյ, երբ խորտակւած կլինի նրանց հակամարտութիւնը քաղաքական շրջանում, և նրանք ի վիճակի կլինեն ծառայելու կապիտալի տեղ արտադրութեան նոր սիստէմին:

Պրօլետարիատը նրանց ճնշելու ցանկութիւն չունի, բնդհակառակը միայն նա տաւաշին անգամ հնարաւորութիւն կտա նրանց զարգացնելու ամենաեռուն ստեղծագործական աշխատանք: Պրօլետարական զիկտատուրան Ֆիզիքական և մտաւոր աշխատանքի բաժանումը, կապիտալիզմին յատուկ, կր փոխարինի սրա և նրա միացումով, և այդպիսով կը կապի իրար աշխատանքն ու գիտութիւնը:

Գործարանների, հանքերի, կալաժքների և այլն էքսպրօպրացիաների հետ միասին պրօլետարիատը պէտք է վերջ տա ազգաբնակչութեան շահագործւելուն կապիտալիստական տնտեսքերի կողմից, մեծ տները յանձնի տեղական բանւորական խորհուրդների ձեռքը, բանւոր ազգաբնակչութիւնը բնակեցնի բուրժուական բնակարաններում և այլն:

Այս հսկայական լեղաշրջման բնթացքում Խորհրդային

Իշխանութիւնը մի կողմից պէտք է անշեղ կառուցի կառավարչական վիթխարի ապարատը, աւելի քան կէնտրոնացած ձևով, և միւս կողմից կառավարչական անմիջական աշխատանքի մէջ պէտք է դրաւի բանւոր ժողովրդի աւելի ու աւելի նոր խաւեր:

ՈՒՂԻՆ ԴԵՊԻ ՅԱՂԹԱՆԱԿ

Յեղափոխական էպոխան պահանջում է պրոլետարիատից կիրառել կուլի աշխատի միջոցներ, որոնք հաւաքում են ի մի նրա ամբողջ էներգիան, ամենից առաջ, մասսայական կուլի մէթոդները իր արամբարտական վախճանի-ուղղակի բնդհարման հետ բաց ճակատամարտով բուրժուական պետական մեքենայի դէմ: Այդ նպատակին պէտք է ծառայեն միւս բոլոր միջոցները, ինչպէս, օրինակ, բուրժուական պարլամենտարիզմի չեղափոխական օդադորոծումը:

Այդպիսի չաղթական կուլի անհրաժեշտ նախնական պայման է հանդիսանում խզել կապերը ոչ միայն կապիտալի անմիջական լակէյների և կոմունիստական չեղափոխութեան դահիճների հետ, որպիսի դերում երևան են գալիս աջ սոցիալ-դէմոկրատները, այլ և խզել կապերը «Կէնտրոնի» (Կառուցկու կողմնակիցներին) հետ, որը կրիտիքական մօժէնտում թողնում է պրոլետարիատին և խաղեր է սկսում նրա որոշակի թշնամու հետ:

Միւս կողմից, անհրաժեշտ է բոլի կազմել չեղափոխական բանւորական շարժման աշխատի էլէմենտների հետ, որոնք չնայած աշխ բանին, որ առաջներում սօցիալիստական կուսակցութեան մէջ չէին մտնում, այժմ ամբողջովին կանգնած են Խորհրդային եղանակով պրոլետարական դիկտատուրայի հոգի վրա, ինչպէս, օրինակ, սինդիկալիզմի համապատասխան էլէմենտները:

Յեղափոխական շարժման աճումը բոլոր երկրներում, այդ չեղափոխութիւնը խեղդելու վտանգը կապիտալիստական

պետութիւնների դաշնակցութեան կողմից, սօցիալ-դաւանան կուսակցութիւնների ջանքերը միանալու (Բէրնում դեղին «Ինտերնացիօնալ» կազմելը), որպէսզի լակէյների պէս ծառայեն Վլադիմիր իլյային, վերջապէս, պրոլետարական ապստամբութիւնները համախմբելու և համաձայնեցնելու բացարձակ անհրաժեշտութիւնը — այս ամենը անխուսափելիօրէն տանում է դէպի ճշմարիտ չեղափոխական և իսկապէս պրոլետարական Կոմունիստական Ինտերնացիօնալի հիմնադրումը:

Ինտերնացիօնալ, որն բնագունակ կը հանդիսանա առաջին կուսած աղբային շահերը ենթարկելու համաշխարհային չեղափոխական շահերին, այդպիսով իրագործելու փոխադարձ օգնութիւնը զանազան երկրների պրոլետարիատի կողմից, իսկ առանց անտեսական և այլ տեսակի փոխադարձ աշակցութեան պրոլետարիատը անկարող է նոր հասարակութիւն հիմնել: Միւս կողմից, որպէս հակադրութիւն դեղին սօցիալիստական Ինտերնացիօնալին, կոմունիստական պրոլետարիատի Ինտերնացիօնալը կը պաշտպանի կոլօնիաների շահագործող ժողովրդներին իմպերիալիզմի դէմ նրանց մղած կուլի մէջ, որպէսզի նպաստի համաշխարհային իմպերիալիզմի սխտեմի վերջնական խորտակմանը:

Կապիտալիզմի տերադործները համաշխարհային պատերազմի սկզբում պնդում էին, որ նրանք բոլորը պաշտպանում են միայն իրենց հաշրենիքը: Բայց գերմանական իմպերիալիզմը շուտով երևան բերեց իր գաղանային բնովը մի շարք արիւնարբու գործողութիւններով Ռուսաստանում, Ուկրաինայում, Ֆինլանդիայում: Այժմ, իր հերթին, մինչև իսկ ազգաբնակչութեան ամենաչեղամեծ խաւերի առաջ, մերկացնում են իրենց համաձայնութեան պետութիւնները, որոնք հանդիսացան համաշխարհային կողմադրիչներ և պրոլետարիատի սպանիչներ: Գերմանական բուրժուազիայի և սօցիալ-պատրիստների համաձայնութեամբ, խաղաղութեան մտին կեղծ

ու պատիր Ֆրագները շուրթերին, ի գուր տքնում են նրանք,
տանկանների և բուծ բարբառոս գաղութային զորքերի օգ-
նութեամբ, գետին գլորել և քոպական պրօլետարիատի լեզա-
փոխութիւնը: Աննկարագրելիօրէն անողք է բուրժուական
կաննիրաւների սպիտակ տէրօրը: Անթիւ են բանւոր դասա-
կարգի դոհերը: Նա կորցրեց իր ամենալաւ մարտիկներ Լիբ-
կնէխան, Լիւկսեմբուրգին:

Պրօլետարիատը պէտք է պաշտպանւի, պէտք է պաշտ-
պանւի ինչ գնով էլ որ լինի: Կօմունիստական Ինտերնա-
ցիօնալը ամբողջ համաշխարհային պրօլետարիատին կանչում
է գէպի ալգ վերջնական կռիւր: Զէնքը զէնքի գէմ: Ուժք
ուժի գէմ:

Կորչի՛ր կապիտալի իմպերիալիստական գաւազրութիւնը:

Կեցցէ՛ պրօլետարական Խորհրդների միջազգային հան-
րապետութիւնը:



2013

<< Ազգային գրադարան



NL0036744

